

հիմնուիլ, այլ տեղեակ եւ ճշմարտասէր անհատներու վաւերական վկայութեանց վրայ կը յենու: Արդ Յակոբ Կաթողիկոսին 1680ի հաւատոյ դաւանութեան վաւերականութիւնը կը հաստատեն ղէպքին վկաները եւ ժամանակակից պատմաբան Ստեփանոս Լեհացի, եւ ոչ մէկ ժամանակակից հեղինակ կ'ուրանայ զայն:

Հայրապետին այս վերջին հաւատոյ դաւանութիւնը պարզապէս պսակումն էր նախորդ տարիներուն բազմիցս արտայայտուած անոր կաթողիկէ համոզումներուն, որոնք կը յայտնաբերուին հարազատ, վաւերական գրութիւններով, եւ որոնց կը վկայեն, ինչպէս տեսանք, ականատես եւ ականջալուր վկաներ հայ թէ՛ օտար:

Իր հակակաթողիկէ դադափարներովը ծանօթ՝ Լէո Պատմիչ կը գրէ. «Կաթողիկոսը թողնում էր իրենից հետ կաթողիկների համար զեղեցիկ յիշատակ: Կաթողիկ կղերը նրան համարում էր իր դաւանակիցը: Եղուիտները մահուան անկողնում պառկած ծերունուն ստորագրել տուին մի թուղթ, որի մէջ նա դաւանում էր պապական ուղղափառութիւնը»: Նոյն Պատմաբանը կ'ըսէ նաեւ. «Չնայած ժամանակակից հայ եւ օտար բազմաթիւ վկաների ցուցմունքներին, Մաղաքիա Արքեպ. Օրմանեանը ամէն ճիշդ թափում է հաւատացնելու համար՝ թէ Յակոբ Կաթողիկոսը Հռոմի Աթոռին հպատակութիւն չի յայտնել, այլ միայն կամեցել է ուրիշ տե-